

1953x<sup>3</sup>

① - 54

Franz Glip

P - 1906

891.99  
\$ - 85

11 52452

~~282~~  
~~152~~ 168

11 624

891.99-3

\$-85

Մ

Ե. ՓՐԱՆԳԵՍՆ

# ՔՐՔԻԶՆԵՐ

10008  
35-666

Հրատարակութիւն


ՀՆԿ. «ՐԱԶՁԻՒ»

2003

Թ Ի Ց Լ Ի Ս  
Ելեքտրաշաբաժ տպարան. ընկ. «Հերմէս» Մադաթեան փ., 5  
1906 (175)

# ФРФИДУБ

Дозвалено цензурою. 8 февраля 1906 г. Тицльсъ.



4537

## Փ Բ Փ Ի Զ Ն Ե Բ

(Հոգեբանական էտիսդ)

### I

Եւ նա ցաւը սրտում, թախիծը դէմքին երերում էր այս ու այն կողմը, շըրջում, առանց զիտենալու ուր և ինչու համար:

Նա դառել էր խիստ մտածկոտ և լուռ:  
Եւ որքան բաներ ունէր նա խորհելու:

Ուրւականը, այն վտիտ ու արիւնոտ ուրւականը իր ամբողջ սարսափով միշտ, ամեն բովէ ցցւում էր նրա տռաջ, նա սարսուռով թափ էր տալիս իրեն և օրօրւում անդադար:

Նա գլխիկոր տուն մտաւ: Նրա կինը, Սօնան, ձեռքերը ծալած, ցաւի կնիքը դէմքին լողում էր Սև ծով—մաքերի մէջ:

Սօնան լուռ և ծանը բարձրացրեց թաղ-

ծոտ հայեացքը, բեկոեց ամուսնու վրայ և  
ցաւի շեշտով մրմնջաց.

—Քո սիրտն էլ ցաւում է, դու էլ  
տիուր ես: Այդպէս էլ հարկաւոր է, կա-  
տարւած ոճիրը այնքան է անարգ, որ բո-  
լորիս սրտերը պիտի ցաւեն և տնքան, մա-  
նաւանդ իմ և քո:

Եւ նա աւելի շեշտակի նայեց ամուս-  
նու աչքերի մէջ, ճգնելով այնտեղ բան  
կարդալ:

Խիստ էր այդ մի հատիկ նայւածքը:  
Յակօն անկարող եղաւ տանել և դուրս թը-  
ռաւ մոմուալով.

—Նա արդէն կասկածում է, այդ սար-  
սափելի է:

Նա էլի օրորւում էր:

Դուան առաջ կանգնած էր Ասլանը, Յա-  
կօի ամենասիրելի ընկերը, նրա մօտիկ բա-  
րեկամը. նա արագ-արագ տօտեցաւ, ուզում  
էր բարեկել, խօսել, գոնէ դրանով մի փոքր  
սիրտը թեթևանար... բայց ասլանը արհա-  
մարական մի շարժում արեց, շտապով ներս  
մտաւ և դուռը ծածկեց:

Յակօն քարացաւ իր տեղում:

—Ուրեմն Ասլանը դիտէ արդէն, թոթո-

վեց նա, ուժեղ թափով ցնցւեց և արագ ա-  
ռաջ շարժւեց:

Գիւղի հրապարակում խոնսած էր հոծ  
բազմութիւն: Թախծոտ այդ դէմքերը, որոնք  
վշտի և ցաւի կնիք էին կըում, և դասն,  
թունոտ ժպիտը խաղում էր նրանց շրթունք-  
ներին, լուռ դիտում էին մօտեցող Յակօին:  
Նա մի վայրկեան նայւածքը գցեց այդ  
դէմքերի վրայ, փայլուն երևացին նրան,  
ինքն էլ ժպտաց և սիրտը մի փոքր թեթե-  
ւացաւ: Նա քայլերը արագացրեց, մօտեցաւ,  
դլուխը թեքեց դէսի գիւղացիները, ուղիղ  
նայեց նրանց վրայ, անվճռական ու դող-  
դողացող ձայնով թոթովեց:

Բարև ձեզ:

Եւ ի՞նչ. լուռ էին ամենքը և անշարժ:  
Այժմ միայն նա նկատեց այդ ժպիտների  
դառնութիւնը և նրանց որքան խայթող լի-  
նելլ, Տեսաւ ճաշակեց այդ, և յանկարծ բո-  
լոր գիւղացիների ժպիտներից բարձրացաւ  
մի ընդհանուր քրքիջ, ասես նախամտածւած  
էր այն, գառն հառաջանքները միախառ-  
նւեցին այդ քրքիջներին, և գնացին, թափան-  
ձեցին Յակօի մինչև ոսկորները: Ցնցւեց  
նա սմբողջ մարմնով, սպրդնեց, սարսուաց

և երերուն կանգնեց, ոչինչ չը հասկանաւ-  
լով այդ բոլորից:

—Թու, քո անստմուս երեսին կանչեց  
մի գիւղացի:

—Թու, է՛տ արիւնոտ վերակուիդ վրայ,  
կանչեց երկրորդը:

—Ստոր, անարդ հայ, գնա, գնա, խեղ-  
դիր քեզ Յուղայի նման, այդ միայն քեզ  
պատիւ կը բերի, կը վերացնի ամօթը մեր  
գեղից, գնա, գնա... գոռաց ծերունի  
Աւոն:

Հարիւրաւոր կողմից սկսեցին թքել,  
մրել, անիծել նրան: Անշարժ նա ընդունում  
էր այդ բոլորը: Յանկարծ ուշքի եկաւ, հաս-  
կացաւ, ծածկեց երեսը ձեռներով, մի սար-  
սափելի և անբնական ճիչ արձակեց, յետ  
դարձաւ և փախաւ:

Ընդհանուրի քրքիջը ճանապարհեց նը-  
րան:

Նա մտաւ տուն և դուռը ամուր փա-  
կեց: Եւ լուռ, ամբողջապէս մտածմունք  
դարձած, խորհում էր նա: Մէկ էլ հանեց  
վերարկուն, դէն շպրտեց, ֆէսը գետնին  
խփեց, տրորեց ոտներով, վերցրեց կնոջ  
դէյրան, կտոր-կտոր արեց...

—Ի՞նչ ես անում, այ մարդ, ի՞նչ է  
պտտահել քեզ, ճշաց այլայլւած Սօնան:

—Թող որ պատում, սրանք մերը չեն,  
սրանք արիւնոտ են...

—Արիւնոտ...

—Այն, խեղճ Վաղգէնի արիւնով ներ-  
կւած. բողոքում է նրա արիւնը. ոհ, Աստ-  
ւած իմ, այս ի՞նչ է, արիւն է կաթում, տես,  
կնիկ, այս շորերը արիւնով են շաղախւած,  
դու էլ տեռնում ես, լաւ նայիր: Այս ի՞նչ  
ձայներ են, լսում ես, նրանց քրքիջներն են...

—Ում, այստեղ ոչ ոք չըկայ, ոչ մի  
ձայն չի լսում, բայց դու մի բան...

—Նրանց, գիւղացիների քրքիջներն են,  
տես, նրանք ալհտմարհում են ինձ, հալա-  
ծում, նզովում. տես, սրանք էլ, այս պա-  
տերն էլ, այս վերարկուն էլ, ամենքը կըշ-  
տամբանքով և ատելութեամբ են նայում  
ինձ, երես գարձնում ինձանից...

—Բայց ինչու, ասա, ասա...

—Ինչու, գեռ հարցնո՞մ ես: Ես եմ  
Վաղգէնի մատնողը, էն կտրիչ մարդի, էն...

—Ա'խ, ճիշտ է ուրեմն, ճշաց Սօնան,  
պղծւեց իմ մաքուր օջաղը:

—Վայ քեզ, Սօնա, ու հազիր, շիւան ա-

րա, հող ցանիր գլխիդ... Նա թուլացաք  
վայր ընկաւ, գլուխը առաւ երկու ձեռների  
մէջ և սկսեց հեկեկալ:

Ոչ մի բոպէ Յակօն այնպէս խորը չէր  
զգացել իր յանցանքի ծանրութիւնը, ոչ մի  
բոպէ այնպէս չէր տանջել իր խիղճը, ինչ-  
պէս այս բոպէին: Նա մօտեցաւ կնոջը,  
բռնեց թեկից և ուժգնութեամբ ցնցեց:

— Այդպէս լաւ չէ, դու էլ ծիծաղիր  
վրաս, երես դարձու, դէ շուտ, այնպէս  
ծիծաղիր, որ սիրտս ծակի, ուղեղս շարժի,  
շուտ... Այ, այդպէս... Ո՞հ, Աստւած իմ,  
ես ցնորում եմ, ի՞նչ անեմ, ի՞նչ, այստեղ  
ամեն ի՞նչ տանջում են ի՞նձ...

— Կնա, գնա, ուր կուզես, ում մօտ պէտք  
է, օջաղիս վրայից այդ ամօթը, այդ արա-  
տը մտքրիր, գնա, գնա, շուտ...

— Գնամ, փախչեմ, բայց տես, էս նը-  
զոված վերարկուն, լաւ տես, նրա ամեն մի  
պատուածքը մի մի բերան են դառել և  
ծիծաղում են վրաս, լաւ նայիր, այդ բե-  
րանները արիւնոտ են, դու էլ տեսնում ես,  
այ կնիկ, լաւ նայիր է, բոլորի պատճառը  
սա է, այս արիւնոտ վերարկուն. տուր ի՞նձ.  
բայց նա շարժում է, տես, առաջ է դա-

լիս, դու վերցրու կնիկ, դու քցիր թոնիրը,  
թող վառւի, մոխիր դառնայ, դէ, շուտ...

— Փախիր, քեզ ասում եմ, սև, անարդ  
մարդ, գնա մեղքդ սրբիր, այդ ասում է քո  
օջաղը, շուտ, գնա, գնա...

— Ո՞հ, դու էլ ես հալածում, իմ օջա-  
ղը, այն, փախչում եմ... այստեղ ամեն մի  
առարկայ իրանից ան ու զարգանգ է սր-  
փուում, ես դողում, ես սարսափում եմ...

Եւ նա փախաւ:

## II.

Լուս գիշեր էր. լուսինը ծանը լողում  
էր և իւր կաթնանման շողերը սփոռում Վ...  
գիւղի վրայ: Այդ շողերից ընկան և Յակօի  
վրայ, բայց նա դողաց, սարսափեց նրանց  
տակ: Սառն էին այդ մի քանի շողերը և  
ասես անմեղ արեան կաթիներ լինէին, որ  
թափուում էին նրա գլխին: Նա սարսա-  
փով թափ տւեց վրայից:

— Լուսինն էլ է ծիծաղում, այդ արեան  
կաթիներն էլ նրա քրքիջներն են. նա թոյ-  
նը, որոնք խայթում, սարսուցնում են ի՞նձ,  
մոմուում էր Յակօն և վազում: Բայց մեր

էր փախում և ինչու. այդ նրա համար պարզ չէր: Բայց նա վագում էր, այդպէս աւելի հանգիստ էր նրա համար:

Ահա նա կանգնեց: Տիրեց պահ մի լը-ռողոթիւն:

—Բայց այս ի՞նչ է, ոտքերս այրում են; միթէ այստեղ փողոցում կրակ կայ... ոչ, ոչ...

Յանկարծ նա հանեց կօշիկները և դէն շպրտեց:

—Գնացէք, հեռացէք ինձանից, ամօթի իրեր, այդ էլ նրա, Ալի փաշայի տւածն է... ոհ, այժմ մի փոքր հանգիստ է:

Նա վագեց, էլ աւելի արագ: Ահա ծերունի Աւօի տունը: Նա կանգ առաւ. մի ըսպէ լուռ կանգնեց ոտքի, ապա նստեց, էլի կանգնեց:

—Այս, կը գնամ, կը խոստովանւեմ բոլորը, կասեմ յանցանքս և թողութիւն կը խնդրեմ: Մօտեցաւ նա դրանը, ուղեց ծեծել...

—Ո՞հ, այս ի՞նչ է, իսկոյն ճչաց նա և յետ քաշւեց:

Խաղաղ և լուռ էր այնտեղ, բայց Յակօին թւում էր, որ ամենքը այնտեղ փրսխում են, ամենքը քրքջում, հառաչում,

նզովում են: Անիծում են նոյնիսկ պատերը, դուռը, ամենքը, ամենք...

Զղային ցնցումների մէջ նա երերում, գողում էր և երկու ձնոքով ամուր սեղմել էր գլուխը:

—Ի՞նչ անեմ, մւր փախչեմ, հալածում են ինձ, ամենքը հալածում:

Նա փախաւ սարսափով բռնւած: Լռսմինն էլ այս անգամ փախչում էր, ասես նրան էլ հալածում էին:

Ահա Յակօն կանգ առաւ, բայց միայն մի վայրկեան, նորից վագեց և այս անգամ ուրիղ Սաղաթէլենց տունը: Զարգանդով, մահւան սարսուռով կանգնեց նա տան առաջ, այն օջաղի առաջ, որի տղամարդ ջահիլը, գիւղի պարծանքը, ազգի սիրելին երէկ մորթւեց, մորթւեց իրեն ձեռքով: Ոչ մի տեղ նա այնպէս չէր դողացել, սարսափել, ինչպէս այստեղ: Երերաց նա, ոտքերը ծելւեցին և վայր ընկաւ:

Ամբողջ ժամանակ Յակօն ջղաճգութեան մէջ էր, նա ականջները պինդ սեղմել էր, բայց ցուրտ սարսաւոր գալարում էր նրան, երերալով ոտի կանգնեց նա, դիտեց շուրջը:

Ամեն կողմից քրքիջներ և հառաջներ: Նա  
փախաւ:

—Բայց ուր կորեմ... Ամենքը, ամենքը  
հալածում են ինձ. իմ սեփական օջաղը, իմ  
կինը, իմ հայրենի գիւղը, անիծում, գուրս  
վոնդում իրենց անարդ զաւակին: Ի՞նչ  
անեմ, այ ձայներ, խղճացէք ինձ, մի մի-  
ջոց ցոյց տւէք...

—Ի՞նչ արեց Յուղան. գնաքեզ խեղիիր:  
Ահա ինչով կարող ես մաքրել սև ամօթը...

Յակօն շատ փսփսոցներ, շատ ցաւոտ  
շշուկներ լսեց, բայց ծերունի Աւօի այդ  
խօսքերը շատ պարզ, շատ որոշ հնչեցին  
նրա տկանջին:

Յակօն փախաւ:

Գիւղից արդէն դներս էր նա: Կանգ-  
նեց, հայեացքը ձգեց նա գիւղի վրայ, նայ-  
եց երկար և մի քանի կաթիլ արցունքներ  
քամւեցին նրա աչքերից: Սիփանայ հովերը  
շնդշնդալէն եկան, խլեցին արտասուքի այդ  
կաթիլները և արեան կերպարանքով շաղ  
տւին օդի մէջ: Կուրծքը դէմ տւեց այդ  
հովերին, ծծեց նա անյագ, ազատ շունչ  
առաւ, էլի, էլի, ծծեց:

—Բայց այս ի՞նչ է մրմնջաց նա,

ասես արիւն եմ կուլ տալիս, միթէ Սիփան  
սարերը արիւն են փչում: Ամեն աեղ արիւն  
է հոսում: Բայց ասում են, որ լեռները  
մարդի հանգիստութիւն են տալիս. այստեղ,  
բարձրում լաւ է անդորր է, չեն լսումքըր-  
քիջներ և հառաջներ, այստեղ չըկան մարդ-  
արարածների դաժան, հեգնական խայթող  
դէմքեր... Ահա գտլիս եմ, այ սարեր, գոնէ  
գուք ըողունէք ամենից մերժւած, հալած-  
ւած զաւակին:

Եւ նա վազեց: Վ... գիւղը մնաց յետեր:  
Նա վազում էր անդադար, առանց յետ նայ-  
ելու, չլինի թէ էլի լսի այն տանջանք  
սփոռող քըրքիջները, ցաւոտ կըծքերից թուած  
հառաչանքները:

III.

Արդէն ուշ գիշեր էր: Սիփանայ սառը հո-  
վերը թեթէ կերպով գալիս շոյում էին սառ-  
ըոտում նստած Գ... գիւղի տները, ասես  
փսփսում, մի գոյժ կայտնում ննջող գիւ-  
ղացիներին, ապա անցնում և նոյն փսփը-  
սուկը տարածում ամենուրեք:

Յակօն հասաւ Գ... գիւղը. նա միան-

— 16 —

գամայն յոզնած, դադրած էր, ոտքերը  
չէին խոնարհում նրան կամքին. այլևս նա-  
անկարող էր շարունակել, պէտք էր զգում  
մի փոքր հանգստանալ, թուլացած մամինը  
կազդուրել: Գ... զիւղը լաւ ծանօթ էր  
նրան: Նա մօտեցաւ, ծերունի Սաքօենք  
դուռը ծեծեց: Նրա ձեռները դողում էին:  
Զայն չկա, շըշուկ չէ լսւում, կարծես կեն-  
դանի շունչ չկար այնտեղ: Նա լաւ էր ճա-  
նաշում ծերունուն, չէ՞ որ նա քնել չգիտէ,  
ուր է ապա, այս ի՞նչ մեռելային դրութիւն  
է: Նորից բաղիսեց: Լսւեց ծերունու, սովո-  
րական խոպոտ հազը:

— Ո՞վ է, ճայնեց ծերունին:

— Ճամբորդ մարդ եմ. տեղ տւեք մի  
փոքր հանգստանամ ձեր օջախի տակ և էլի  
շարունակեմ ճանապարհս:

Նա իսկոյն դուռը բացեց ներս առաւ  
Յակօին:

— Գնանք, գնանք, խեղճ մարդ, դու  
դողմում ես, ի՞նչ է պատահել... դու չես  
կարողանում քայլել... Ծերունին զրկեց  
նրսն, ասես զրկում էր իր հարազատ որ-  
դուն, տարաւ տուն, նստեցրեց թոնրի վրայ:

— Դէ տաքացիր, լաւ տաքացիր, սո-

ներդ կախիր թոնիրը, գլուխդ կռացրու  
թոնրի վրայ... այ այդպէս... շատ լաւ է:  
Յակօն երերում էր: Ծերունին մի բարձ  
բերեց. Յակօն յենւեց նրա վրայ, ոտքերը  
ազատ ձգեց թոնրի շուրթը. այդպէս շատ  
հանգիստ էր: Սարսափելի էր նա դառել.  
զգգուած մազերը թափւել էին երեսի վրայ,  
ոտքերը քերտւած մի քանի տեղից, կուրծքը  
մերկ, դէմքը այլակերպւած, աշքերը խոր  
ընկած: Տանջանքի և խորը վշտի կնիք էր  
կրում նրա դէմքը, որը ճրագի աղօտ լրայի ա-  
ռաջ էլ տւելի սարսափելի էր: Մի քանի ժամ-  
ւայ ընթացքում որքան տանջանք: Այդպէս  
նա երկար մնաց: Ծերունին անդադար խնա-  
մում էր նրան, վէրքերը կապուտում, կաթ  
ունէր նա, կաթ էլ խմացրեց:

— Ո՞հ օրհնաւի քո օջախը, սիրտս զովա-  
ցաւ, մրմնջաց Յակօն, բաւականին հանգըս-  
տացայ, այժմ կարող եմ նստել: Այստեղ,  
այս յարկի տակ շատ լաւ է, կուզէի միշտ  
մնալ այստեղ, չեն լսւում այն ճայները, չը-  
կան այն տանջանք սփոռող դէմքերը, ինձ  
չեն հալածում:

— Զեմ հասկանում քեզ, որդի, պարզ  
խօսիր, քեզ իմ տանից ոչ ոք չի հալածի,

մնայ ինչքան կուզես. էս դողդողացող ձեռ-  
ներս շատերին են կերակրել, էս օջաղը  
շատ դարիքների է օթևան եղել. դու էլ մի-  
դարիք ես, քեզ էլ կը խնամեմ: Դէ, ասա,  
ասա. որտեղից ես գալիս, ուր ես գնում  
ի՞նչ է պատահել քեզ: Կուի բռնւեցի՞ր անօ-  
րէնների հետ, նրանք կողոպտեցի՞ն քեզ,  
ասա...

Ես գալիս եմ վ... զիւղից. միայն այս-  
քան: Աստուածդ սիրես, էլ բան մի հարց-  
րու...

— Ին սեաւոր գեղից ես գալիս հա, դէ  
խօսիր, ի՞նչ ես մարդի սպանում: Երէկ սե-  
օր էր մեզ համար, ողջ մեր գեղը սեաւոր-  
ւել էր: Վայ, կրակն ընկնի քո օջաղը, ան-  
խիղճ Յակօ, նզովի քո ընտանիքը. Էն սար  
ջահիլ ի՞նչպէս զոհ գնաց նրա պատճառով:  
Խօսիր որդի, պատմիր էն վերան գեղի ցաւը,  
նրա վիշտը:

Յակօն սկսեց դողալ, ցնցւել. նա շփոթ-  
ւեց, սկսեց անհանգիստ շարժումներ անել,  
շուռ գալ այս ու այն կողմ:

— Դէ, խօսիր է, ի՞նչ ես պապանձւել.  
վիշտ, ցաւ, կսկիծ պատմել չգիտես, ի՞նչ է,  
էլ դրանից դուրս ի՞նչ ենք տեսել. այդ է

եղել մեր անբաժան ընկերը... դէ, շուտ  
խօսիր, ցաւեցրու սիրտս, պատմիր, որ գո-  
նէ մի քանի կաթիլ արիւն-արտասուր քամ-  
ւի չորցած աչքերիցս և սիրտս հովանայ...

— Ես ոչինչ չգիտեմ, ծերունի, այլ-  
այլւած թոթովեց Յակօն:

— Ոչինչ չգիտես. ուրեմն դու հայ չես,  
անարժան զաւակ ես: Դէ չսիր. ես կը  
պատմեմ, թող քո սիրտն էլ ցաւի, դու էլ  
սեւաւորւիր: Ուֆ է, է: Զուլում օր էր,  
զուլում. վայ քանդիվ քո տունը, Յակօ, փուլ  
գար քո գլխին: Ո՞հ ցաւի բան է, ցաւի,  
սիրտս մոմուռում է. նա աւերեց մեր տունը,  
սեւաւորեց մեր սրտերը, վազգէնի նման  
սար տղամարդին մատնեց, տւեց գաղան  
անօրէնների թրի բերանը, ուֆ, ուֆ...

Ծերունին լուեց. գլուխ կախ քցեց, աչ-  
քերից ցայտեցին մի քանի կաթիլ արասուն-  
քներ եւ զլգալէն թափւեցին ալեզարդ մի-  
րուքի վրայ: Յակօն ջղային ցնցումների մէջ  
անդադար շարժումներ էր անում, տեղ էր  
որոնում աչքերով, որ փախչի, ազատւի այդ  
սպանիչ հայեացքից, այդ տանջող ծերու-  
նուց:

— Զուլում էր, որդի, զուլում, գլուխը

բարձրացրեց և նայեց ուղիղ Յակօի վրայ.  
ստոր հայ. և սև գործը արել է մի վերար-  
կութիւնամար, ահա թէ որքան նա ստոր է,  
պատւից, նամուսից զուրկ, խիղճը մեռած,  
ինքնասիրութիւնը բթացած։ Սև բան է  
նրա արածը, որդի, շատ սև։ Քանի էդպիսի  
աննամուսներին էս թուլացած բազուկնե-  
րովս խեղդել եմ, ատամներով կրծոտել  
նրանց կոկորդը, քամել նրանց արիւնը,  
ծւիկ-ծւիկ արել։ Հէյ գիտի ջահիլութիւն,  
բայց ինձ թւում է որ հիմք ընկնի ձեռքս,  
էլի կը ծւատեմ նրան, բազուկներս գեռ բո-  
լորովին չեն թուլացել դուշմանին խեղդելու  
համար, նրանք միշտ էլ զօրանում են։ Բայց  
ինչ է, դու փախչում ես, դու գունատում  
ես. չես ուզում լսել մեր ցաւը, մեր դարդը։

— Հերիք է, հերիք, ծերունի, թող քո  
պատմութիւնը...

— Դու հայի գաւակ չես, անէծք քեզ։  
Եօթանասուն և հինգ տարի ապրել, տան-  
ջւել եմ ցաւ և վիշտ կրել, դեռ չեմ պա-  
տահել մի հայի, որ չուզենայ լսել ցաւ,  
վիշտ, սև պատմութիւն... Այս, դու հայի  
արիւն չունես, դու հայ չես։ Տես, այ, հայ  
ճուտը, նա իմ արիւնն է, մի հատիկ թոռս.

շատ ունէի, բոլորն էլ զուրբան եղան մեր  
սուրբ երկրին, մեռնեմ նրա անւանը. սա էլ  
զուրբան լինի նրան։ Դեռ շատ փոքր է,  
հազիւ 14 տարեկան լինի. տեսնում ես էն  
սուրը, զլիսի վերը կախած, հէնց էդ սրով  
պիտի կտրի մատնիչ Յակօի վիզը։ Ասա,  
ասա, դու փախչում ես, ինչու, դու մի  
բան գիտես, ասա...

Ծերունու աչքերը վառվում էին. նա  
դողդողացող ձեռքով ամուր բռնեց նրա  
օձիքից և թափ տւեց։

— Ես... ես ոչինչ չը գիտեմ, ես մի  
ճամբորդ և խեղճ մարդ եմ, թող որ շա-  
րունակեմ ճանապարհում...

— Այս, դու խեղճ, անճար մարդ ես,  
բայց քո այդ շփոթւիլը լաւ բան չի ասում,  
դու լաւ հայ չես... Գնա, գնա, հեռացիր  
այստեղից, այս սուրբ օջաղից, կը կեղաո-  
տես այս մաքուր տունը...

Ծերունի Սաքօն դուռը բացեց և նրան  
դուրս հրեց։ Յակօն դուրս թուաւ, անցաւ  
բակը, քայլերը արագացրեց. ծերունին էլ  
նրան հետեւց։ Այս տունն էլ է հալածում,  
անիծում։ Նա դուրս եկաւ փողոց։

Սիփան սարը և իր բարձրութիւնից դիտում էր ոտների տակ տարածւած վանայ ծովակը, որը առանձին նազանքով օրօրւում էր և թեթև հովերը գնում, շոշափում էին նրա անդորր և բարակ ալիքները, վրդովում նրանց քաղցը նինջը և սահում, անցնում։

Ճամբորդը կանգնեց. ծանր, յուսահատական «ախ» արձակեց, մի ըոպէ դադար առաւ, դիտեց վերելքը, փրկարար սարը և մրմնջաց.

— Ի՞նչպէս լաւ, ի՞նչպէս հանգիստ է այստեղ. ցաւ, վիշտ անծանօթ են այս վայրերին, ո՞հ, հոգիս մի փոքր թեթևացաւ... գլուխը կախ զցեց կրծքի վրայ, ննջեց. Անցաւ այդպէս միայն մի ըոպէ, յանկարծ նացնցւեց, ծանօթ ուրւականը, գէմքերը և քրքիջները նորից պատկերացան և սկսեցին հալածել. Նա փախաւ. Այս անգամ նա չէր վազում, այլ թռչում, ցատկում էր. Երկար նա վազեց, երկար կռւեց քամու հետ՝ կռւրծքը դէմ տւած, երկար այս և այն քարին զարկւեց, դէմ դէն թափառեց, մի բլուրից միւսը ցատկեց, ելի բարձրացաւ... և ուժասպառ, դադրած վայր ընկաւ մի բլրի գաղաթի վրայ. Նա երկու ձեռքերով ամուր

— Դու գնում ես, ասա, ասա գոնէ  
ով ես դու, հանգստացրու ինձ։

— Ես, ծերունի, ես Յակօն եմ, մատ-  
նիչ Յակօն, ասաց ու փախաւ.

— Նզովք, անէծք քեզ, ճշաց ծերունին,  
ոտները ծալվեցին, նա վայր ընկաւ շէմքի  
առաջ և ատամները կրծտացրեց։

«Նզովք, անէծք քեզ». ծերունու այս  
խօսքերը ստացան քրքիջի կերպարանք և  
սկսեցին հալածել աննամուս մարդին։ Նա  
վազում էր արագ, անընդհատ, առանց յետ  
նայելու, բայց չէր կարողանում ազատւել  
այդ մինչև ոսկրները թափանցող քրքիջնե-  
րեց, այդ թունոտ կանչերից։

## IV.

Քարքարոտ էր դէպի Սիփան սարը  
տանող ճանապարհը. Յակոն աշխատում էր  
շուտ հասնել, բարձրանալ և դադար առնել։  
Նա մէկ հեալէն վազում էր, մէկ կանգնում՝  
անյագ ծծում օվը, մերկ կուրծքը շոյում էր  
սառը քամին, լլսում իրեն հալածող քրքիջ-  
ները, էլի վազում։

Առաջը կանգնած էր վեհ և հպարտ

սեղմել էր ականջները, սեղմում էր, որքան  
ուժ ունէր, չլինի թէ նորից լսի այն տարօ-  
րինակ, զարհուրելի ձայները։ Աչքերն էլ պինդ  
փակել էր։ Նա նստեց և լուռ լսում էր։  
Ոչ մի ձայն, ոչ մի դէմք...

Ճիշտ են ասել, որ լեռները ցրում են  
վատ մտքերը, հանգիստ են տալիս մարդ-  
կանց։

Նա բացեց աչքերը վախվիելով, և իս-  
կոյն փակեց. ականջներն էլ բացեց, բայց  
բացել և նորից սեղմելը զրեթէ միաժամա-  
նակ կատարւեցին։ Նորից բացեց նա ա-  
կանջները. այս անգամ երկար նա լսեց...  
Էլի փակեց... նորից բացեց։ Նրան թւում  
է, որ վերեր խաղաղ է, շատ խաղաղ,  
բայց ուրիշ է ցածը։ Այն կողմից, ուղիղ Գ...  
գիւղի կողմից լսում է մի անորոշ, խուլ,  
խորհրդաւոր փափսուկ և մի տեսակ զար-  
գանդ է փչում, մինչև ոսկրներ թափանցող  
սարսուռ։ Յակօխն թւում է, որ փափսուկը  
աւելի ու աւելի մօտենում է, տարածւում,  
աւելի որոշ և ընդհանուր է դառնում։ Այդ  
փափսուկը պատմում ամենքին, խօսում նը-  
րանց հետ, ասում քարին, խոտին, բլուրին,  
ձորին, չոփին... Նրանք էլ ցաւեցին, կսկծա-

ցին, մռմռացին. Նրանք էլ լեզու ստացան,  
սկսեցին խօսել, անիծել, հալածել...

—Ո՛, արարիչ Աստւած, այս ի՞նչ ձայ-  
ներ, ի՞նչ դէմքեր են. ամենքը, ամենքը  
ինձ հալածում են։ Այս բոլորը եկել են այս-  
տեղ, այս սարի վրայ, ասես ինձ տանջե-  
լու... Այս ֆէսը հրտեղից եկաւ, անբաժան  
և սարսափելի ուրւականը, այս կօշիկները,  
գիւղացիները՝ իրենց խայթող քրքիջներով  
և հառաչանքներով, ապա այս վերարկուն,  
ծերունի Սաքօն իր թոռի հետ, նա եկել է  
ինձ սպանելու... Բոլորը, բոլորը այստեղ  
են, իմ շուրջը, լեռների վրայ. իսկ այս  
բարերը, այս ձորերը, սրանք էլ լեզու են  
առել, խօսում են, անիծում, հալածում են  
ինձ... մւր ես գալիս տօ անիծած, հեռնեմ...  
ի՞նչ էք ուղում, ի՞նչ անեմ։

Յանկարծ բար-լուռթեան մէջ շատ  
պարզ և որոշ լսեց ծերունի Աւօի խօսքե-  
րը.—«Գնա, գնա քեզ խեղպիր, ի՞նչ որ ա-  
րեց Յուղան»։

Նա ջղային ցնցումների մէջ մի ըսպէ  
կանգնեց, հայեացքը ուղղեց դէպի հեռուն,  
ծանր հառաչեց, մի ճիչ արձակեց և իրեն  
նետեց ցած, դէպի ձորը։

Զարդ ու փշտոք եղաւ նա. արեան կաթիլները ցայտեցին և ընկան կանաչների վրայ, բայց իւրաքանչիւր կանաչը իսկոյն սարսափով թափ տւեց իր վրայից անարդ արիւնը...

Ամեն ինչ խաղաղւեց. միայն ձորը մի ծանր «ախ» արձակեց իր հսկայ կրծքից, նա սկաւորւեց, մթնալեց, որովհետեւ անարդ զանգւածը հանգստանում էր իր կրծքին, իսկ արեան կաթիլները դեռ ցայտում են մի կանաչից միւսը՝ անընդհատ, անվերջ, յաւիտեան...

**ԶՍՊԻԱԾ ՔՐՔԻՋԸ**

## Զ Ս Պ Ի Ա Ծ Փ Ռ Փ Ի Զ Ը

(Նուէր Ա. Ահարոնեանին)

### I.

Լերան ստորոտում, վճիտ աղբիւրակի կշտին նստած հանգստանում էին երկու ձամբորդներ: Թէև ամառայ խիստ շոգերի օրերն էին, արևի ճառագայթները, իբր քոցերի խուրց, ընկնում երկրի վրայ, այրում էին մարդկանց, խանձում կանաչը, բայց այնտեղ, լեռներում զով էր օդը, մեղմ և անուշ: Կար և դուրեկան բարակ քամի, որը էլ աւելի գրաւիչ կերպարանք էր տալիս: Եւ երկու ձամբորդները, ձգւած կանաչ խոտի վրայ, թիկն տւած քարին, վայելում էին դրա ամբողջ քաղցրութիւնը, ասես վճոել էին ընդմիշտ մնալ այնտեղ, չբաժանել այդ աղբերից, այդ կանաչից, այդ լեռներից... նրանք երկուսն էլ ծեր էին, երկուսն

Էլ երկար տարիների կեանք տեսած։ Մէկը  
լուռ էր, թախծոտ և մտազբաղ. միւսը ու-  
րախ և անդադրում խօսում, զրուցում էր։  
Երկու հակագիր անձնաւորութիւններ։

Աւօն հայեացքը յառած քրքջացող աղ-  
բրին՝ նայում հետևում էր նրա ամեն մի  
շարժմանը, դիտում նրա իւրաքանչիւր ալի-  
քը, իւրաքանչիւր չփոցը ասես այնտեղ, նր-  
անց ծալքերում մի բան, մի գաղտնիք էր  
որոնում, ասես ուզում էր նրա լեզուն հաս-  
կանալ։ Եւ նրա սիրտը աղմկւում էր։ Հինց  
առաջին նայւածքից գրաւեց նրան այդ աղ-  
բիւ, այդ շփոցը, թէ ինչու, չզիտեմ։ Ա-  
ւօյին թւաց, որ իր աւտօն է հեծկւում,  
նրա արեան հեծկւոցն է լսում։ Նայեց Ա-  
ւօն, նայեց և կպաւ այդ քչքչացող, խօսող  
ալիքներին և անցածի վերքերը, մէկը միւ-  
սից ահաւոր, մէկը միւսից դառն, պատկե-  
րացան նրան և սիրտը, Աւօյի քաջ սիրտը  
ճմլում ցաւում էր դրանց տակը...

Բայց Միսս Զօնը, այդ կինը ուրախ էր,  
պատմում էր նա շատ բան, խօսում էր ո-  
գեորւած, միանգամայն յափշտակւած։ Պատ-  
մում էր նա երևելի աշխարհներից։ Տիրոջ  
կեանքն էր նկարագրում, Քրիստոսի հրա-

շագործութիւնները թւում, Աւետարանից,  
Սուրբ գրքից էր խօսում։

Բայց սկզ էր այդ կինը, ինչ գործ ու-  
նէր նա այս լեռներում, և վերջապէս ում  
համար էր խօսում։

Այդ կինը, աւելի ճիշտ, պառաւած օ-  
րիորդը, ամերիկացի միսիօնարուհի էր։  
Մահմեդական աշխարհը դեռ դարեր առաջ  
գրաւել է աւետարանի քարոզիչներին, ու-  
րոնք մորթի հագած, պարկը մէջքերին,  
ցուպը ձեռքերին, շրջում էին ահազին տա-  
րածութիւններ, կտրում անցնում ձորեր ու  
լեռներ, և անընդհատ խօսում տարածու-  
թիստոսի խօսքերը։ Այս միսիօնարուհին,  
Միսս Զօնն էլ գրանց շաւզով էր գնում, նա էլ  
հազարաւոր վերստեր էր անցել, ճեղքել էր  
սար ու ձոր, եկել էր այստեղ — մահմեդական  
այս աշխարհը «հոգիներ փրկելու», աւետա-  
րանի խօսքերը սերմանելու։ Եւ նա սրբու-  
թեամբ կատարում էր իր դերը. անընդհատ  
նա պատմում, քարոզում էր ամեն տեղ. ամեն  
ժամանակ, թէ տանյարկի տակ, թէ դպրոցում,  
թէ խնջոյքների միջոցին, թէ հասարակական  
հրապարակային ժողովարաններում. մի խօս-

քով միշտ, ոչ մի առիթ բաց չեն թողնում  
ուղում են խօսել, քարոզել...

Եւ այժմ Միսս Զօնը խօսում էր, խօ-  
սում խիստ ոգեսրւած: Կերան ստորոտում,  
նստած մենմենակ և խանգարող չկայ. Էլ  
դրանից լաւ առիթ, յարմար ըոպէ. և մա-  
նաւանդ առանձին պատճառ էլ կար: Նրա  
դիմացը Աւօն էր, այն անհաւատ լուռ և  
խորհրդաւոր ծերունին. Նա նոյնիսկ վիրա-  
ւորւած էր համարում իրեն, որ այսքան  
երկար խօսում, քարոզում, կրօնական ջեր-  
մեռանդութիւններջնում, սարսափ ազդում,  
բայց դիմացին ժայռ է, սառն և միանգա-  
մայն անտարբեր: Միսսը օգնութեան էր  
կանչում իր երկար տարիների փորձառու-  
թիւնը, ամբողջ իր հաւատի թափը, իր աղ-  
դու խօսքերը, բայց ժայռը, այդ տարօրի-  
նակ ծերունին ամեն ինչ ընդունում էր մի  
հատիկ հեղնական հայեացքի, մի դառն ժը-  
պիտով: Եւ այդ սպանում խիստ հարւածում  
էր Միսս Զօնին.

— Այն, այն, Աստւած թէև շատ բարի  
է, շատ ողորմած, բայց քեզ, Աւօ, քեզ չ՚  
ների. դու լաւ չես հաւատում Նրան, դու  
չես արժանանայ Նրա երկնային արքայու-

թեան, Նրա երկնային ժպիտին. դու կը  
գնաս մի մութ սարսափելի աշխարհ, ուր  
կայ միայն տանջանքներ, ուր գնում են բո-  
լոր չարագործները, այն, բոլոր անհաւատ-  
ները: Դրա անունը, Աւօ, դժողը է, այս...

Յանկարծ լուց միսսիօնարունին, նա  
որպէս շանթահարւած յետ մզւեց, ասես մի  
խիստ սովտակ, մի զօրեղ հարւած ստացաւ:  
Աւօն որ մինչև այդ պահուն լուռ դիտում  
էր աղբը ալիքները և միանգամայն գերի էր  
դառել իր ցաւոս խոհերին, զլուխը զանգաղ  
բարձրացրեց և հայեացըը ուղիղ բնեսեց  
միսսիօնարունու վրայ: Խիստ, շատ խիստ էր  
այդ նայւածքը, կարծես թոյն, դառն լեզի  
էր կաթում նրանից: Եւ Զօնը անկարող ե-  
ղաւ տանել այն. հարւածը խիստ էր, նա  
շփոթւեց, կորզրեց խօսակցութեան թելը,  
սարսափեց այդ մի հատիկ, լուռ, անխօս  
նայւածքի առաջ և շշմած կանգ ա-  
ռաւ:

Անծանօթ չէր միսսիօնարունուն Աւօի թու-  
նոս հայեացըը, հեղնական ժպիտը, սիրո ծա-  
կող քրքիջը: Նա այդ բոլորի դառնութիւնը շատ  
էր ծծել, դրանց անողոք հարւածը շատ էր  
կրել: Բայց ոչ մի անգամ, ոչ մի տեղ Աւօին ա-

ուանձնայատուկ նայւածքը այնպէս չէր ընկշել, խորտակել Միսս Զօնին, ինչպէս այստեղ, այս լեռներում։ Այդ նայւածքը, այդ մի հատիկ նայւածքը այնքան բան էր ասում, այնքան մտքեր հաղորդում, կեանքի փիլիսոփայութիւնը նոյնիսկ յայտնում։ Այդ նայւածքը ասում էր, որ թէև դու երկար տարիներ ես ապրել, բայց չես ճանաչել կեանքը, այդ բարդ հիւսւածքը, մնացել ես խեղճ ու միամիտ, եւ մի շարք բազմազան մտքեր։ Աւօն, այդ խորհրդաւոր անձը առհասարակ շատ ժլատ էր խօսելու մէջ, և հէնց դրանում էլ կայանում էր նրա թափը, նրա ոյժը։ Ժպիտը, քրքիջը, նայւածքն էին կազմում նրա լեզուն, դրանցով էր նա իր միտքը յայտնում։

— Այս, դուք, հայերդ լաւ հաւատացեաներ չէք, — շաբունակեց միսիօնարունին, երբ մի փոքը հանգստացաւ, թեթևացաւ հարւածող նայւածքից, հաւաքեց իրեն և զգաց իր դրութիւնը։ — Ես շրջել եմ ամբողջ Կովկասը, եղել եմ Տաճկաստան, պլտտել եւրոպական զանազան երկիրները, տեսել բոլոր հայերին, բայց լաւ քրիստոնեաների չպատահեցի. ամէնքն էլ անհաւատ են,

հեռացել են Տիրոջ ճանապարհից։ Այս, հայերը անհաւատ են, և հէնց դրա համար է, որ տառապում են, չարչարւում, հէնց դրա համար է, որ Տաճկաստանում ձեզ թալանում, սպանում, կոտորում են։ Դուք պիտի մունջլինէք, խորարհ և միշտ անդադրում Տիրոջ անունը, նրա սուրբ խօսքերը մըմնջաք...

— ԽԵղճ կին, մռմռաց Աւօն և տեղից շարժւեց։ — Վեր կաց խանլում, շատ նստեցինք, արդէն արնը թեթևել է, օրը անցել, շուտով առաջներս էլ բացւելու է «արեան ձորը», երկիւղալի է։

— Արեան ձոր, է, երկիւղալի է, հեղնեց միսսը, հապա որ ասում եմ թէ լաւ հաւատացեալներ չէք։ Իսկական հաւատացեալը ազատ է ամեն վտանգից, ամեն պատուհասից։ Այ, ես ունեմ սրա նման պաշտպան հրեշտակ. սրա մէջ զըւած է Տիրոջ ամեն մի խօսքը, ամեն մի աստւածային պատգամը, որ միշտ քաղում եմ, իսկ դու դեռ չես տեսել որ աղօթես։

Աւօն ոչինչ չպատասխանեց, երեսը նորից շվեց սառը ջրով, վեր կացաւ, ձիերը պատրաստեց, նստեցին և լուռ առաջ շարժւեցին։

Երկու կողմից լեռները բարձրանում էն ու բարձրանում՝ կազմելով մի երկար, նեղ ձոր, որի միջով դէսի հարաւ էին դիմում ծերունի ճամբորդները:

Բայց ի՞նչն է կապել այդ երկու տարօրինակ անձնաւորութիւններին. ի՞նչն է դրդում միսս Զօնին պահել ծառայ Աւոխ, այդ սարսափելի մարդին, միթէ նա չէր կարող նրան հեռացնել և ուրիշը վարձել: Այն կարող էր, բայց միսսը ամեն ջանք, ամեն եռանդ և շնորհք գործ էր գնում, որ խորը թափանցի, ճանաչի նրա ներքին աշխարհը, այդ տարօրինակ, խորհրդաւոր հոգին, անհաւատի հոգին, տեսնի ի՞նչ կայ նրա հոգու ծալքերի մէջ, բաց անի այդ, այնաև մաքուր հաւատ տարածի, նրան լաւ «հաւատացեալ» դարձնի: Միթէ տանել կարող է նա, որ յաճախ իր պաշտօնակիցները՝ թէ հանաքով և թէ լուրջ՝ նկատում են, որ ինքը անկարող է մի կողուսեալ ոչ խարը ազատել, դարձի բերել, Աւոխն «լաւ հաւատացեալ» դարձներ: Եւ միսսը այս հինգ տարի է, որ կուռում, քարոզում, խօսում է, բայց... ստանում է միմիայն հեղնական հայեցք և կծու. երգիծանք: Այդ աւելի է

կրծում միսս Զօնի սիրաը, աւելի հարւածում նրան: Ասես մի ներքին և զօրաւոր կոփւ է կատարում երկուսի մէջ. կոփւը խորհրդաւոր է, գաղանի, և երկու պառաւ սրտերը աշխատում են իրար վշշել, իրար տապալել... Թէ որի կողմը կը լինի յաղթութիւնը, պարզ չէ, միայն միսսը այդ կոփւը մղելու համար ունի ճարտար լեզու, անսահման եռանդ և հաւատ, իսկ Աւօն միմիայն քարէ սիրտ, տննկուն հոգի, խայթող նայւածք և գառն ժպիտ: Եւ երկու սրտերի մէջ շարունակում է այդ զօրաւոր պատերազմը, կատարում է առնասարակ խուլ, ծածուկ, երբեմն էլ բռնկում և ստանում ահաւոր կնիք, սարսափելի բնաւորութիւն: Կոփւը կատարում է մէկի կողմից գիտաւորեալ, միւսի կողմից դիպւածաբար:

Առաջներն էր մի վերելք: Ծերունի երկու ճամբորդները բարձրանում էին այդ վերելքը, Աւօն առաջից, իսկ միսսը յետեկից: Միսսիօնարունու միաքը ամբողջապէս կաշկանդել էր Աւօն. նա մտածում էր այդ տարօրինակ, խիստ մութ մարդի մասին, մտածում և կարծես կամաց կամաց հոգու խորըում տեղի էր տալիս, համոզւում էր

նրա անխօս ասածների անողոք ճշմարտութեան մէջ: Իսկ Աւօն, այդ սալսափելի մարդը միանգամայն անձնատուր էր Եղել իր անսանձ, այլանդակ մտքերին, այնքան գերի էր դառել, որ նոյնիսկ մոռացել էր միսի ներկայութիւնը: Նա ձիու սանձը բաց թողած, դիտում էր հեռան, հեռան, և անցածի դառն յիշողութիւնները շարան շարան, երկար շղթայ կազմած, գալիս անցնում էին նրա մտքի առաջից: Աև, մոռայլ է այդ շղթան, փայլուն ոչինչ չկայ այնտեղ և նրա ամեն մի օղակը ունի իր ուրոյն պատմութիւնը, բայց սև պատմութիւն:

Ահա այնտեղ, այս սարի յետել,—այնտեղից է սկսւում սև շղթայի ծայրը— ահա անօրէնները խողխողում են անմեղ մանուկներին, սրի ծայրին բարձրացնում նրանց այլանդակ մարմինները, և արձակում լկտի, բարբարոս հոնուց: Ահա իր կինը, սիրուն Սառան, ընկաւ, ընկաւ մի շարք սրբերի անունները մրմնջալով: Ահա իր ջահիլ-ջիւան կտրիչ Աւօն, հեծկլտում է, թըպրտում անողոք, անխիղճ հարւածների տակ: Ահա և ինքը ունում է, ամբողջապէս ջիղ դարձած, որպէս տղրուկ, կպել է անօրէն քրդի

կրծքին՝ ցասումով լցւած, կրծում նրա կոկորդը, ասես ուզում է այնտեղից ծծել, քամել ամբողջ կենսական հիւթը: Ահա... և այդպէս անվերջ շարունակում է սև շրդթան, բոլոր օղակներն էլ մէկը միւսից դաժան, մէկը միւսից ահաւոր, մէկը նիւսից արիւնոտ:

Եւ այդ բոլորի առաջ հսկայ, խորհըրդաւոր ծերունու քար սիրտը փուլ եկաւ, աչքերը թացացան, արտեւանունքներից կախւեցին երկու կաթիլ արտասուքներ և ընկան այտերի վրայ: Այդ նկատեց միսս Զօնը. նա ամբողջ ժամանակ դիտում էր Աւօին: Այդ արտասուքները ընկան միսս Զօնի սրտի խորքում, նա ընկճւեց դրանց տակ, ընկճւեց այդ լուռ, բայց դաժան ծերունու մեծ ցաւի առաջ և մի տեսակ քաղցր զգացմունքով լցւեց դէպի նա: Նա զգաց, որ Աւօն ունի վիշտ, որը ծանրացնել է նրա սրտի վրայ, կնճիռներ է ակօսել դէմքին և դարձել նրան տարօրինակ, խիստ մութ, բայց ուշագրաւ անձնաւորութիւն:

— Աւօ, ձայն տւեց միսս Զօնը:

Այդ կանչը հանեց Աւօին արիւնոտ աշխարհից, պոկեց սև, ահաւոր մտածմունք-

ներից, և նա դարձրեց իր վշտու, թախ-  
ծալի դէմքը դէպի միսսը:

— Աւօ, — կրկնեց միսիօնաբուհին ա-  
ռանձին քնքուշ, կարեկցական տօն տալով  
իր խօսքերին, — ես. ինչպէս տեսնում եմ,  
դու ունես մի դարդ, որ ցաւցնում է քո  
սիրտը. տեսայ թէ ինչպէս արտասուք կա-  
թեց աչքերիցդ. ասա, պատմիր, Աւօ, և  
հաւատա, առանց հաւատի միշտ էլ կը տան-  
ջես:

— Այնտեղ, խանմ, պրտիս խորքելում  
ոչինչ չկայ քեզ հետաքրքիր. այնտեղ ամեն  
ինչ սարսափելի է: Այնտեղ կայ անսատիման  
վիշտ, արդար ցասում, սև, այլանդակ մըտ-  
քեր, «լաւ հաւատացեալներիդ» համար ա-  
հաւոր, սարսափելի խոհեր, խակ փայլուն  
ոչինչ չկայ: Մի քրքրիր այդ, խանմ, լաւ է  
շարունակես ճանապարհը, այդ ձեւնառու չէ  
քեզ:

Նա լոեց, ամբողջ մարմնով հարւածեց  
ձիուն, ասես այդպէս ուզում էր և հարւա-  
ծեց իրեն պաշարող սպանիչ մտքերը, և այդ  
կատարւեց համարեա անգիտակցաբար: Միս-  
որ ոչինչ չկարողացաւ պատասխանել, նա  
էլ հետեւ Աւօի օրինակին, ինքն էլ տա-

պանդակեց և լուռ մրմնջաց, — ով Տէր, քո  
հսկող աչքը թող սրա վրայ լինի, այս ան-  
ձար մարդի. նա ինչ որ անում է, ով Տէր,  
անում է անգիտակցաբար: Նա սխալ ճա-  
նապարհի վրայ է կանգնած, ով Տէր, դու  
փրկիր, դարձի բեր նրան, ով Տէր...

II.

Անցան նրանք վերելքը և մտան մի  
փոքր, բայց վտանգաւոր ձոր: Այդ ձորից  
դուքս գալիս արդէն բացւում է ճամբորդի  
առաջ Ուրմի գաւառի ընդարձակ հարթու-  
թիւնը: Հարուստ և գեղեցիկ է այդ փոքրիկ  
երկիրը: Այնտեղ ապրում է մի բուռն  
քրիստոնեա ժողովուրդ: Խեղճ և հարստա-  
հարւած է նա: Ահա այդ մի ափ քրիստո-  
նեաների մօտ է շտապում միսս Զօնը: Նը-  
րանք լաւ հաւատացեալներ չեն, պիտի նո-  
րից քրիստոնեայ դարձնել. նրանք ճանա-  
պարհից դուքս են եկել, պիտի դարձի բե-  
րել. նրանք մոլորւած ոչխարներ են:

Երկուսն էլ լուռ էին, երկուսն էլ մը-  
տաղբաղ: Սպանիչ էր այդ լոսութիւնը: Ա-  
ռաջ գոնէ միսսը խօսում, պատմում էր.

այժմ նա էլ լրակեաց դարձաւ, ասես նա  
վարակւեց Աւօից, ասես նա էլ ընկաւ ծանր  
մաշող մտքերի աշխարհը: Եւ լուռ գը-  
նում էին: Յանկարծ ըլրի յետեկց լսւեց  
սուլոց: Արձագանքը պատասխանեց: Էլի,  
Էլի... Այս անգամ պատասխան ստացւեց  
մէկ երկու տեղից: Դա չարագուշակ նշան  
էր: Աւօն կանդ առաւ և սկսեց լսել: Կանգ-  
նեց և միսաը սարսափած: Աւօն լսեց, լոեց  
և առաջ ասպանգակեց ձին: Նրա օրինակին  
հետեւց և միսիօնարուհին: Էլի, Էլի... Առւ-  
լոցի ձայները աւելի ու աւելի խորհրդաւոր  
կերպարանք էին ստանում և լսում մօ-  
տիկից:

Միսս Զօնը դոզում էր և նրա շրթունք-  
ները սկսեցին մրմնջալ ինչ որ աղօթք:

— «Կանգնեցէք», յանկարծ հէնց գըլսլ-  
ների վերից լսւեց սպառնական կանչը:  
Այդ հրամայական ձայնը կրկնւեց երկրորդ,  
երրորդ անգամ: Միսս Զօնը կանգնեց սար-  
սափած, և չգիտէր ինչ է ուզում այդ ձայ-  
նը: Աւօն էլ կանգնեց, երկուսն էլ ցած ի-  
ջան ձիերից: Երիտասարդական արիւնը ա-  
սես խիեց Աւօի ուղեղին, նա կրակ կտրեց:  
Այդ ձայնը շատ էր ծանօթ. քանի քանիսին

նա խեղգել է, գեախն է զլորել: Յիշեց նա,  
յիշեց բոլոր գէպերի մանրամանութիւն-  
ները, էլի արիւնը եռաց երակներում, ջը-  
ղուտ ձեռները ամուր սեղմեց, ատամները  
կրծտացրեց և ձեռքը տարաւ գէպի ուսը,  
չկար այնտեղ հրացանը, իր հաւատարիմ  
ընկերը, և հառաջեց սրախ կսկիծից ու գը-  
լուխը կախ գցեց: Նա ունէր միմիայն սուր,  
այն էլ հասարակ բան. ի՞նչ կարող էր զրա-  
նով անել: Միսիօնարուհին փոքր ինչ հան-  
գստացել էր, նա տեսաւ, նկատեց Աւօի  
շփոթութիւնը, նրա պատրաստելը:

— Աւօ, զոռաց նա, չլինի թէ աղմուկ  
հանես, փորձանք բերես մեր գլխին. նրանք  
ի՞նչ պիտի անեն մեզ, նրանք էլ մեզ նման  
ճամբորդներ կը լինեն:

Դառն ժպիտ երևաց Աւօի գէմքին. այդ  
ժպիտը ասում էր. ոչ, խանմ, դրանք ճամ-  
բորդներ չեն, դրանք քրդեր են, նրանք գա-  
լիս են մեզ կողոպտելու կամ սպանելու:

— Հէնց թող քրդեր լինեն, նրանք մեզ  
ձեռք չեն տայ: Ես սուրբ գիրք ունեմ, Ա-  
ւօ, ես չեմ վախենում, դու էլ հաւատա, որ  
քեզ էլ պաշտպանի...

Միսաը այնպէս սկսեց խօսել, կարծես

մոռացաւ և սարսափի, և քրդեր և ամեն  
ինչ:

— «Կանգնել», լսեց նոյն հրամանը,  
բայց այս անգամ շատ մօտիկից: Եւ չան-  
ցաւ մէկ ըոպէ, նրանց առաջ դուրս եկան  
երեք քրդեր, երեքն էլ զինւած: Այդ ծանր  
կրիտիքական ըոպէին Աւօն կանգնել էր  
լուռ, ամուր սեղմած սուրը և ըստ երե-  
ւոյթին, անլորր. Քրդերը մօտենում էին,  
բայց Աւօն անթարթնայում էր միսիօնարու-  
նուն, հետևում նրա իրաքանչիւր շարժմա-  
նը: Ասես միսաը աւելի է նրան զբաղեցնում:

— Ի՞նչ կայ մօտերնիդ, շուտ հանեցէք,  
դիմեց Մուստաֆան:

— Ի՞նչու, ի՞նչ իրաւունքով, կանչեց  
միսաը, չէ որ դրանք իմն են:

Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ, բարձր  
հեգնական: Աւօի երեսին էլ երևաց թոյլ,  
բայց թունոտ ժայռ:

— Այն, այժմ քոնն են այդ իրերը, —  
նրանք խօսում էին թուբքերէն — ծիծաղե-  
լով նկատեց չիւսէինը, բայց մի ըոպէից  
յետոյ կը դառնան մեր սեփականութիւն:

— Ոչ, դուք իրաւունք չունէք: Մեր  
Տէրը այդպիսի բան չի ասել, մէկը իրա-

ւունք չունի միւսի ունեցւածքը յափշտա-  
կելու:

Նրանք սկսեցին արձակել խուրջինը և  
շորերը: Աւօն անշարժ, որպէս արձան,  
կանգնուծ էր, միսաը ամբողջ ժամանակ  
բղաւում, կանչում էր:

— Ո՞չ, դուք իրաւունք չունէք: Զէ որ  
մեր Տէրը ասում է, մի սպանաներ, մի գո-  
ղանար, ուրիշի ունեցւածքը մի խիր, այս  
ի՞նչ անարդարութիւն է. այս, հէնց այժմ  
մեր Տէնը երկնքից կրակ կը թափի ձեր  
զլսին, սարերը փուլ կը դան...

— Ի՞նչեր է ասում էս պառաւը, խենթ  
էս ստ, ի՞նչ է:

Միսիօնարունու և Աւօի հայեացքները  
հանդիպեցին իրար: Միսս Զօնը չկարողա-  
ցաւ մի վայրկեան անգամ տանել այդ ծա-  
կող, հարւածող նայւածքը և աչքերը ցած  
թողեց:

Յանկարծ սկսեց հրացանաձգութիւն,  
փամփուշտները վզվզոցով եկան և անցան  
գլխների վրայով: Քրդերը շփոթւեցին, վեր-  
ցրին իրերը և շատապեցին սարը

Միսօը և Աւօն մնացին ձորում: Նրանց  
հոգիները աղմկում յուզւում էին, դադարեց

և հրացանաձգութիւնը։ Աւօն հայեացքը ամբողջապէս բեւեռել էր միսիօնարուհու վրայ, որը անշարժ, անորոշ և ճնշող մտածմունքների տակ, կանգնած էր։ Այդ բոպէին նրա դէմքի կնճիռները էլ աւելի շատացել, էլ աւելի խստացել էին, և այդ ամէն մի ակօսից, ամէն մի փոսից ասես թոյն էր կաթում, ասես դրանցից իւրաքանչիւրը մի հեզնութիւն, մի երգիծանք էր։ Դէմքը ուռել էր և կարծես ամեն մի խորշի տակ լցւած էր թոյն, պայթուցիկ նիւթ և սպասում էր մի փոքրիկ ճնշման, մի հարւածի, որ պատռուէր, ամբողջապէս պայթէր և դուրս ցատկէր այնտեղից թոյնը ուժեղ թափով, ամբողջ ուժգնութեամբ։

Միսաը մի խեղճ և տխուր հայեացք գցեց Աւօի վրայ։ Յանկարծ Աւօի դէմքը ամբողջապէս, որպէս ձգւած զըսպանակ, կարծես միանգամայն պատռւեց, որոտաց, դուրս վիժեց քրքիջի կերպարանքով նրա հոգու մէջ ամբարւած թոյնը, ամբողջ մաղձը, գնաց կըպաւ միսս Զօնի ամենանուրբ ջղերին, վիրաւորեց նրա ամենանւիրական զգացմունքը, անցաւ, տարածւեց ամենուրէք։ Այդ զըս-

պւած քրքիջի առաջ զողաց միսսը, ամբողջ մարմնով սարսուաց, երերաց, ոտքերը ծալւեցին և վայր ընկաւ։ Այդ քրքիջի առաջ երերաց և նրա հաւատը։ Սարերն ու ձորերն էլ սարսափով ընդունեցին այդ թունոտ, խայթող քրքիջը, նրանք էլ դողդողացին։

Մեզ կոտորում են, մեզ թալանում են, որոտաց Աւօն, որովհետեւ մենք անհաւատ ենք, որովհետեւ չենք մրմնջում Տիրոջ անունը, որովհետեւ նոյն ձեռվ ենք պատասխանում քրդերին, իսկ ձեզ... Այ, թէ ինչ էք քարոզում դուք...

Եւ նա քրքիջաց։ Ասես այդ տարօրինակ ծերունին որոշել էր սպանել մեսցնել այդ պառաւին, ուզում էր ձիգ տարիների ամբարած թոյնը միմիայն այս մի հատիկ և խեղճ կնոջ գլխին թափել, նրանից վրէժ առնել։

Միսս Զօնը աչքերը կտրեց գետնից, նորից մի խեղճ հայեացք գցեց Աւօի վրայ, մի հայեացք, որ կարծես ողորմութիւն էր հայցում, կածես լուռ աղաչում էր ինայել իրեն։

Աւօն զգաց այդ, զգաց և սիրտը հովա-

ցաւ: Նրանք պատրաստւեցին շտամով հեռանալ այդ վտանգաւոր ձորից:

— Էլի էլի, նորից հրացանաձգութեան ձայներ, հէնց այն կողմից, ուր անհետացան քրդերը, և աւելի ու աւելի տեհնդուր բնաւորութիւն է ստանում:

— Վը զ, վը զ...

### III.

Արել արդէն բոլորովին թեքւել էր: Այնտեղ, լեռների յետեւում հրացանաձգութիւնը կամաց-կամաց դանդաղում, նւազում էր: Միասը և Աւօն, երկուսն էլ մտազրադ և լուռ, շտապում էին ազատւել այդ արեան ձորից, որից կարծես իրօք արեան հոտ էր փչում:

Յանկարծ շատ մօտիկից, հէնց իրենց ետեից, լսեց ձիու ոտնաձայներ: Նրանք յետ նայեցին, և ահա չորս ձիաւորներ: Դրանք հայեր էին, չորսն էլ զինւած և քըրդական հագուստով: Զարգանդը իսկոյն փակեց միսս Զօնին, նա կծկւեց ձիու վրայ, մի անընական ձիչ արձակեց և ասպանդակեց ձին: Նա կարծեց թէ հէնց նոյն քրդերն

են, որ գալիս են սպանելու, մնացածը թալանելու: Բայց Աւօն հէնց առաջին հայեացքից ճանաչեց նրանց: Նա գւարթացաւ և մի զօրեղ ցնցում ստացաւ:

Զինւած մարդիկ մօտեցան:

— Մի վախիր, գիմեց առաջից գնացողը, մենք քրդեր չենք, մենք աւազակներ չենք, մենք էլ ձեզ նման քրիստոնեաներ ենք:

Դրանք ճանաչեցին Աւօին:

— Օհ, լոյս քո տեսնողին, Աւօ: Ի՞նչ ունես այս ձորում, այս կնոջ հետ: Տղերք, չէք ճանաչում, սա մեր «հերոս ծերունին» է, այն ուժեղ, ցնցող, մաքուր հոգին:

Նրանք իսկոյն ցած թուան ձիերից, ուղղակի յարձակւեցին իրար վրայ և գրկախառնւեցին: Քամի տարի է հա, որ զատւել են իրարից, և նրանք ասես աշխատում էին մի ըոպէի մէջ առնել այնքան երկար ժամանակի կարօտը: Աւօի խոր կնճիռները բացւեցին, նրա գէմքը փայլեց, ուրախ ժըպիտ երեաց այնտեղ: Եւ նրանք սկսեցին զրուցել, պատմել իրենց դարդերից, ցաւերից, անցեալի դառն ու քաղցր յիշողութիւններից: Այնքան բան ունէին նրանք իրար

հաղորդելու. Նրանց սիրտը ցաւոտ մտած-  
մունքների, բազմապիսի դարդերի, արկած-  
ներով լի շտեմարան է՝ անսպառ, անհատ-  
նում: Եւ բացւում էին իրար առաջ այդ  
սրտերը. Աւօն, այդ մշտական լուռ և խոր-  
հրդաւոր ծերուկը, այժմ անդադար խօսում  
էր, պատմում, և բառերը նրա բերանից,  
որպէս անսպառ աղբըից, դուրս էին թափ-  
ւում:

Անծանօթ մարդիկ և Աւօն այնքան յա-  
փշտակւած էին, որ միսս Ջօնին միանգա-  
մայն մոռացել էին: Նա ապուշի նման նա-  
յում էր այդ հետաքրքիր, միենոյն ժամա-  
նակ խորհրդաւոր տեսարանին, նայում, նա-  
յում և ոչինք չէր կարողանում հասկանալ:  
Սկզբում նա հասկանում էր նրանց խօսակ-  
ցութիւնը, բայց յետոյ լեզուն դարձաւ իրեն  
անծանօթ, թւում էր, որ իրեն անծանօթ  
լեզու է, ոչ հայերէն, ոչ թուրքերէն, ոչ էլ  
քրդերէն, այլ մի բոլորովին անծանօթ, շին-  
ծու, պայմանական լեզու:

— Ելի էն ազնիւ, էն կեանքով լի ու  
ոգեսրող հոգին ես, բարի ծերուկ, վատ  
կեանքը ոչինչ մաքուր բան այնտեղ չի փը-  
չացրել: Հը, քո քրքիջները, քո տարօրինակ,

թունոտ ծիծաղը քանի անգամ խայթել է  
էս պառաւ միսիօնարուհու սիրտը, անշուշտ  
նա կը ձգտի քեզ «որսալ», լաւ հաւատա-  
ցեալ դարձնել...

Եւ ինչ բարի պտուղի է ոաստ եկել:  
Եւ այդ խենթ պառաւը, — ասենք բոլոր էդ  
«լաւ հաւատացեալները» խենթ են. — ասում  
եմ էդ խենթը ինձ քարոզում է, որ անօրէնը  
մերկացած սրով մեզ մօտենալիս մենք պի-  
տի վզներս ծուենք, միայն Աստծուն նւիր-  
ւենք և նրա անունը մըմնջանք:

— Հա, խօսքի բոնւեցի, նկատեց զրան-  
ցից մեծը, և մոռացայ ասել, որ էս սարի  
յետեր պատահեցինք երեք քրդերի, կուի  
բոնւեցինք, երկուսին սպանեցինք, բայց եր-  
բորդը փախաւ և ազատւեց: Նրանց մօտ  
գտանք 20 թուման, մանր մունը բաներ և  
մի Սուրբ գիրք: Գիրքը ընկած էր ձորի մէջ,  
մի քանի թերթ էլ պատառուել են: Երկում  
է, որ էստեղ մարդ են թալանել և գուցէ,  
ով գիտէ, թալանւողները եղել են ըստ քո  
«լաւ հաւատացեալներ»: Մենք հեռւից նկա-  
տեցինք, որ էն ձորի մէջ մարդ են թալա-  
նում ու սկսեցինք հրացաններ արձակել:

— Այն, երկուսն էլ «լաւ հաւատացեալ-

ներ» էին, առանձին հեղնական և կծու տօնով կանչեց Աւօն և բարձր ծիծաղեց:

—Ինչու ես ծիծաղում, Աւօ, ովքեր են եղել դրանք:

—Ովքեր, երկու «լաւ հաւատացեալներ», ես և միսս Զօնը: Եւ լսեցի միսս Զօնին, քրդերը եկան, սկսեցին թալանել մեզ, իսկ ես և միսսը միմիայն աղօթք էինք մրմնջում, Տիրոջ խօսքերից խօսում, արդարութիւնից ասում, իսկ քրդերը առողջառողջ քոքում էին մեզ վրայ, ճիշտ այնպէս, ինչպէս այժմ ես եմ ծիծաղում, հա, հա, հա...

Վարակիչ էր այդ ծիծաղը, նրա համոգմունքի, նրա ցաւոտ կեանքի արտայայտիչը: Անծանօթ ճանապարհորդներն էլ վարակւեցին, նրանք էլ սկսեցին ծիծաղել, բարձր առողջ...

Միսս Զօնը շւարած էր և ոչինչ, ոչինչ չէր հասկանում այդ ծիծաղներից, միայն զարմանում էր, թէ ինչպէս այդ լուռ ծերուկը այդպէս խօսող էր դարձել:

—Խանմ, դարձաւ Աւօն նրան, քեզ մի լաւ լուր ունեմ հաղորդելու:

—Ի՞նչ, Աւօ:

—Այս անծանօթ մարդիկ սպանել են մեզ թալանող քրդերին:

—Հա, սպանել են, շատ լաւ են արել, շատ լաւ, նրանց տեղն էր:

—Ինչու ես ուրախանում, խանմ, չէ որ սրանք յանցանք են գործել, մարդ սպանել, դա մեղք է, Աստծուն դէմ:

—Ախր նրանք մեղաւոր էին, ախր նրանք ինձ թալանեցին իմ իրերս տարան:

—«Ախր ինձ թալանեցին», հա, հա, հա, հապա նրանք էն քրդերը մեղաւոր չեն, որ անմեղ տեղը թալանում, աւերում են մեր վաթանը, կոտորում հայերիս, ասում եմ, հապա նրանք մեղաւոր չեն...

Միսս Զօնը լուռ աչքերը ցած թողեց, ասես ամաչում էր նայել ուղիղ Աւօին. այդ սպանիչ մարդի աչքերին:

—Ահա քո փողերը և իրերը, խանմ, քրդերի ձեռքից են առել, ահա և սուրբ գիրքդ, գտել են ձորում:

Միսս Զօնը կոպերի տակով նայեց պատառոտած գրքին, ձեռք մեկնեց և կերցրեց:

—Դէ. Աւօ, արդէն ուշ է, սկսք գնում ենք. ինչքան ճանապարհ ունենք անցնելու, դուք էլ շտապեցէք:

Նրանք նորից համբուրւեցին, նստեցին  
ձիերը և շարժւեցին առաջ:

—Բարի ճանապարհ, ազնիւ մարդիկ,  
մրմնջաց միսս Զօնը: Ովքէ՞ր են դրանք, Ա-  
ւո, ի՞նչ լաւ մարդիկ են:

Ծանր հառաչեց Աւոն և խորհրդաւոր  
կերպով արտասանեց.

—Նրանք, խանմ, նրանք էլ «անհաւատ»  
են, ինձ նման «վատ հաւատացեալներ»,  
բայց արդար, պաշտելի մարդիկ.

Այս անգամ ասես այդ դաժան բառերը  
այնպէս խիստ, այնպէս անողոք չհնչեցին  
միսսի ականջին: Նա հետզհետէ իրականու-  
թիւն, անողոք ճշմարտութիւն էր գտնում  
այդ մութ անձնաւորութեան մէջ և լուռ  
խոնարհուում:

—Այս, արդար, ազնիւ մարդիկ, լուռ  
թոթովեց միսիօնարուհին, Բայց ուր են  
գնում, Աւո, էդ անծանօթ խորհրդաւոր  
մարդիկ:

—Ուր են գնում, գնում են այ էն-  
տեղ, էն սարի յետեր, էնտեղ մի մեծ աշ-  
խարհ է, ուր տառապանքի մէջ ապրում է  
մի ամրող ժողովուրդ, ուր անընդհատ ա-  
րիւն է հոսում, ուր շատ կան քեզ նման

թոյլ արարածներ, անպաշտպան ընտանիք-  
ներ, որոնք անդադար կողոպտում, սպան-  
ուում, կոտորում են հէնց այդ քրդերի  
ձեռքով: Ահա էնտեղ են վազում, հարստա-  
հարւածներին պաշտպանելու համար են  
շտապում, էն վերան...

Աւոն ծանր «ախ» արձակեց և աչքե-  
րը յառեց դէպի հեռու, հեռու... և նրա  
աչքերը թացացան և քամւեց աղի արտա-  
սուք: Թեթև քամի կար, առաւ այն իր թե-  
ւերի վրայ և տարաւ արիւնոտ երկիրը,  
այնտեղ, ուր այնքան արտասուք է թափ-  
ուում, տարաւ նրանց հետ խառնելու:

Այդ յուզմունքի տակ ձմլւեց և միսսի  
սիրտը, նա էլ փուլ եկաւ և արտասուքները  
գլուխէն թափւեցին:

—

**q h d l**

## Գ. Ի. Ժ. Ը

(Եւէր Օր. Ս. Բ. ին):

Փոթորիկ է, վզգոց, գոռում-գոչիւն:  
Վեր, ամպերի մէջ, երկիր-երկիրնքն է որու-  
տում, հարւածում. վար ոտների տակ, եր-  
կիրն է դողդողում:

Մութ, սարափելի...

Մի քանի սաժէն հեռաւորութեան վրայ  
ոչինչ չէ նշմարւում, միայն կայծակի շնոր-  
հիւ հնարաւոր է դառնում մի փոքր հեռուն  
տեսնել:

Ահա վայլ... Հորիզոնում նշմարւեցին  
ինչ որ մի շարք սկ բաներ: Ահա նորից,  
էլի, էլի, անընդհատ: Այժմ պարզ նկատւում  
է, զբանք մարդիկ են, ահազին խառնիճա-  
ղանձ խուժան, կէս ուրախ, կէս սարսա-  
փած, նայում է կատաղի բնութեան մէջ  
թռչող երիտասարդին, որին ամբոխը «գիծ»  
է համարում:

«Նա», բայլերը հաստատ, դրական,  
հայեացքը հարւածող, հոգին անվեհեր,  
կուրծքը աներկիւղ դէմ տւած բնութեան  
պատահարներին, ճեղքում ու անսասան  
առաջ է դիմում։ Անյագ կերպով նա դի-  
մում է շուրջը, անդադար թափառում է  
այս ու այն կողմ, աջ-ձախ, նայում է  
ամեն ծակ ու ծուկ; ոչ մի բան չի թագ-  
նուում-«Նրա» սուր դիտող աշքից...

Անցաւ երկար...

«Նա» կորաւ, չի երևում. և միայն  
ծիծաղադէմ և շւարած ամրոխը խար-  
խափելով նայում է նրա ետևից,

Փոթորիկը մեղմանում է, որոտը, կայծը  
նւազում է։

Ահա «Նա» նորից, հեռւում, շատ հեռ-  
ում, մի փոքր բլրի վրայ։

Խուժանը նկատեց նրան և սկսեց հըր-  
ճւել ինչպէս միամիտ, անմեղ մանուկ։

«Նա» այնաեղից աւելի լաւ, աւելի հե-  
ռուն է տեսնում։ Բայց այժմ նա մենակ  
չէ. նրա մօտ կայ և մէկ ուրիշը, որ աւելի  
ծեր է երեսում, հոգով, հանգիստ, խաղաղ։  
Նա ուղիղ նայում է երիտասարդի աչքերի

մէջ. կարծես ուզում է ամեն բան նրա աչ-  
քերից իմանալ։

—Ո՞ւր ես գնում, ինչ ես վնարում  
բնութեան այս կատաղի հոսանքի, մըրկալի  
ալիքների մէջ...

Նա չըկարողացաւ շարունակել. ներ-  
քին յուզմունքը խեղղեց նրան։

—Բայց գու ինձ կարող ես ասել, ով  
ծերունի, ասեց «Նա», շեշտակի նայելով  
ծերունու երեսին, այդ էակների, մարդու  
գժւեցնող էակների հոգիները ուր են գնում։

Ծերունին լուր ախ քաշեց, ցամքած-  
աչքերից քամւեց վերջին երկու կաթիլ  
արցունքը։ Նա չէր կարողանում նայել երի-  
տասարդի երեսին, կարծես, ինչ որ ներքին  
վիշտ, անցածի դառն յիշողութիւնները նո-  
րից սկսեցին նրան տանջել։

—Լսում ես, ծերունի, չես պատաս-  
խանում... ոչ, պէտք է իմանամ, ինչ կայ  
այս վզվացող ալիքների մէջ, պէտք է իմա-  
նամ ի՞նչով է հանգչում արար-աշխարհ,  
պէտք է համեմ այն անեղը հորիզոնին,  
պէտք է իմանամ ինչ կայ, ինչ է կատար-  
ում այնտեղ, այ այնտեղ, այն անսահման  
եզրում. նայիր հեռու, լաւ նայիր։

Նա ձեռքով ետ-ետ է տանում օդը,  
աշխատելով հեռուն ցոյց տալ:

— Զէ, որդի, այստեղ ոչինչ չկայ,  
գլուխդ իզուր մահի մի տուր, անհնա-  
րին է այստեղ գնալ, դարձիր.—խօսեց  
ծերունին երկար լոռւթիւնից յետոյ, գլուխը  
բարձրացրեց, նորից մի բոպէի չափ նայեց  
ուղիղ «նրա» վառող աչքերի մէջ...

Եեխտասարդը ծիծաղեց, դառն, բարձր,  
հեղնական, գլուխը տարութերեց, աչքերը  
սևուեց հեռուն և դիմեց դէպի իրան տան-  
ջող անսահման եղը:

Երկու կողմից դիտում են «նրան» յա-  
ռած աչեր:

Անցաւ մի պահ. նա այլևս չի երեսում.  
բայց նոյն լարւած դրութիւնն է... նոյն  
անշարժութիւնը:

— Ահա գիմը, լսեց յանկարծ խուժանի  
միջից:

Մի աւելի բարձր բլրի վրայ, որտեղից  
աւելի հեռուն է տեսնում, նա, ինչպէս  
յաղթող հերոս, հպարտ, նպատակակէտին  
մօտեցող, հանգիստ դիտում է շուրջը...  
Ահա նա հայեացք դարձրեց ուղիղ դէպի ան-  
սահման եղը, նայում է երկար... և յան-

կարծ ցնցւեց ամբողջ մարմնով, երեսը  
մույլւեց. կծկւեց:

— Այս, «նա» է, կանչում է ինձ, ինչ-  
պէս ժպտում է, շշնջաց նա, մի անբնական  
երկիւղալի ճիշ արձակեց ու ամբողջ թա-  
փով իրան նետեց դէպի վար, եղը...

Օդի ալիքները խլեցին ճիչը և թևերի  
վրայ առած տարածեցին շատ հեռուն, ամեն  
տեղ, ամեն ծակ ու ծուկ...

Ամբոխը հեռացաւ և ուրախ և սար-  
սափած, իսկ ծերունին խոր ախ քաշեց ու  
ալևոր գլուխը թողեց երկու ձեռների մէջ:

Դեռ ճիչը արձագանք է տալիս երկար,  
անվերջ...

1900 թ.

Կ Երգ



1953X

2013

